գրեանս առաքեցին 'ի Թադաւորեալ քաղաքն 'ի ձեռն Գաղատացի Սահակ վարդապետի։ Իսկ գլխաւորք ազգին ընթերցեալ զգրեանս՝ ծանեան զամենայն իրս, եւ ձեռն արկեալ 'ի գործ ընտրութեան՝ ընտրեցին նախ զԿիրակոս Եպիսկոպոս, այլ նա կանխագոյն պատրաստեալ զհրաժարական իւր՝ տուեալ էր 'ի Սահակ վարդապետի։ Եւ 'ի լինիլ բանից 'ի վերայ նորա, մատոյց նա զայն թուղթ 'ի ժողովն, եւ նոքա ընկալեալ զայն, ընտրեցին զԶաքարիա Եպիսկոպոս Տարոնոյ 'ի Կոր գեղջէ։ Եւ ապա ծանուցեալ 'ի Դուռն, առին զՊատրիարքական Պէրաթն և յանձն արարին Սահակ վարդապետի հանդերձ գրովք։ Եւ նորա մեկնեալ անտի եկաս յԵրուսաղէմ, եւ մատոյց զգրեանս, եւ յաւուր տօնի Վարագայ Խաչի նստաւ հանդիսիւ Զաքարիա Եպիսկոպոս յԱթոռ Պատրիարքութեան, ('ի Սեպտեմբերի 26։ 1841)։

Հայք յառաջագոյն առեալ էին հրովարտակ սակս նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի։ այլ 'ի ժամանակս խռովութեան, որ յաղագս չինուածոցն Համբարձման տեղւոյն՝ խափանեցին Յոյնք և զայն ընդ այլ հրովարտակաց, որպէս գրեցաք, եւ Դատաւոր տարւոյն՝ զի մի զայրասցի ստելութիւն և խռովութիւնն 'ի մէջ երկուց ազգաց, դադարեցոյց զգործ նորոգութեան։ Իսկ այժմ Հայք 'ի ձեռն Համոուլլահ Դատաւորին Երուսաղէմի վերստին խնդրեցին 'ի Տէրութենէ՝ յեցեալ 'ի բանս հրովարտակաց։ Զի Այրն Ծննդեան ներքոյ և արտաքոյ, և դերեզմանն Ս։ Աստուածածնի, ըստ օրինակի Գերեզմանին Քրիստոսի բաժանել 'ի մէջ երկուց ազգաց։ հիւսիսային կողմն եկեղեցւոյն հանդերձ դրամբ սեփհականել Հայոց։ միջին և հարաւային կողմն Յունաց։ սիւնազարդ սրահն՝ յերից դրանց մինչ արտաքին յերկաթեայ դուռն հանդերձ բանալեաւ նորին, հաւասար բաժանել Հայոց եւ Յունաց։ նորոգութիւն եկեղեցւոյն ներքոյ եւ արտաքոյ, փոփոխութիւնք կապարաց ձեղուան լինել ընկերութեամբ։ իւրաքանչիւր ազգ 'ի բաժնի իւրում կախել կանթեղս եւ պատկերս։ կանգնել սեղան, աւել ածել եւ մաքրել, որպէս առնեն 'ի տաճարին Ս։ Յարութեան, որով բարձեալ լինին ամենայն վէճք և խռովութիւնք, 'ի ՌՉիլհիճէ, ՌՅՕՅ։